

զերով, որ ինչ որ վահաբիներն ասում են, բոլորը սուտ է: Ճիշտ է, իմ ձեռքը մի մատակ ընկել է, բայց նա այնպէս կը- մաղքացած մի բան էր, որ ես հէնց կոուի միւս օրը ծախեցի մի արարի:

—Ալլահ, Ալլահ, բացագանչեց միրախոռը, խնդիրը սուր կերպարանք է ստանալու: Օղուս աղա, դուք մի ճշմարտախօս և անկեղծ մարդ էք, ինչպէս իս ինքս. մեր մօրուքների վրայ մի ծիծաղէք և մեզ անզիլսարկ մի վերադարձրէք այստեղից: Եթէ մենք այստեղից մատակը չտանենք, մեր երեսները սե կը մնան մինչ յաւիտեան, և ձեր և փաշայի բարեկամական կապերը կը խղուեն: Երդուեցնում եմ ձեզ ձեր հոգով, ասացէք, որտեղ է կենդանին:

—Բարեկամ, ի՞նչ ասեմ, ի՞նչ անեմ. մատակն այստեղ չէ: Վալլահ, ըէլլահ, այստեղ չէ: վահաբիները սուտ են ասում:

«Յետոյ հայրս մօտենալով միրախոռին, մի ինչ-որ բան փսփսաց նրա ականջին: Թէ նա ինչ ասաց՝ չգիտեմ, բայց մի- րախոռը, ինչպէս երեաց, շատ ոգերուեց, և ուրախ սրտով ասաց.

—Շատ լաւ, եթէ մատակը ձեզ մօտ չէ, Ալլահ քէրիմ (Աստուած ողորմած է). մենք կը վերադառնանք թաղղատ:

«Հայրս դուրս եկաւ վրանից և մտաւ մեր վրանը: Նա հրամայեց իր կողին որ իր գանձապահն էր, մէկ քսակ ոսկի բերել, Քսակը բերուեց, և հայրս վերցնելով նրա միջից 20 քաջաղլու, կապեց մի թաշկինակում, դրեց ծոցը և գնաց մի- րախոռ մօտ:

«Շատ քիչ բան խօսուեց մինչև ճաշի ժամանակ, միայն մի քանի խօսքեր փոխանակուեցին ձիերի, շների և զէնքերի մասին: Ճաշի ժամանակ եղաւ: Մի մեծ կլոր կաշուէ սփոռց փոռւեց միրախոռի առաջ, և նրա մէջ դրին մի քանի հատ նոր թխած հայ, Մեր ծառաներից մէկն էլ մի ամանով ջուր ման ածեց հիւրերի առաջ, որպէսզի նրանք լուսային իրանց աջ ձեռքը: Մի մեծ ամանով լի մսաջուր մէջ տեղ դրուեց, և երբ հայրս ասաց «ըէսմէլլահ», նրանք բոլորն էլ հաւաքուեցին: Սփոռցի շուրջը, և ամեն մէկը մի փայտէ գդալ վերցնելով սկսեց խմել մսաջուրը: Մրանից յետոյ ներս բերուեց մի տա- պակած գառ, որ մի բոպէում հիւրերը կտոր-կտոր արին ի- րանց ձեռքով և սկսեցին ուտել: Յետոյ մի մեծ մաջմա- հով բրինձ բերուեց, այդ էլ մեծ ախորժակով կերուեց, բայց ոչ թէ գդալով, այլ ձեռքով:

«Ճաշը վերջացնելուց յետոյ բոլորն էլ վեր կացան և ի- րանց ձեռքերը լուսնալով ասացին:

— Շուշը Ալլահ, Ալլահ քէրէքէ՛թ վէրսին:

«Կիրակուրների մատցորդը հէնց կաշուէ սփռոցի մէջ դուրս տարուեց մեր հովիւների համար:

«Միրախոռը ցանկանալով մերձակայքում գտնուող մի գիւղում ընել՝ հրամայեց պատրաստել ձիերը: Բոլորը դուրս գընացին վրանից, բացի միրախոռից և հօրիցաւ ես սկսեցի աւելի հետաքրքրուել և աւելի ուշադրութեամբ ականջ դնել իմանալու թէ նրանք ինչ են խօսում: Հայրս ասաց.

— Հաւատացէք ինձ, որ 10 քաջաղործից աւելի չեմ կարող տալ, որովհետև չունեմ: Ո՞րտեղից բերեմ գրանից աւելին:

— Այդ անկարելի բան է, ասաց միրախոռը, դուք շատ լաւ գիտեք թէ ինչ կը գայ ձեր գլուխը, եթէ ես գոնչ 20 քաջաղործ չտանեմ այստեղից, երբ փաշան տեսնէ որ ես մատակը չեմ տարել իրան համար, նա անտարակոյս պիտի հրամայէ ինձ վերադառնալ ու ձեզ ձերբակալի: Յետոյ նա կը գրաւէ քո բոլոր ունեցածուն: Ճիշտն ասեմ, հէնց այժմ էլ ինձ հրամայուած է այդ բանն անել, եթէ դուք մերժէք նրա խնդրածը: սակայն եթէ համաձայն էք 20 ոսկի տալ ինձ, ես երբէք չեմ դիպչի ձեզ: Ուստի, բարեկամս, վճռեցէք իսկոյն թէ ինչ էք անելու:

«Այս խօսքերի վրայ հայրս իր ծոցից հանեց թաշկինակը և 20 քաջաղործ համրեց միրախոռի ձեռքը:

— Մենք, ասաց միրախոռն՝ ստանալով 20 ոսկին, միմեանց հետ աղ ու հաց ենք կերել, մենք բարեկամներ ենք, ես խօսք եմ տալիս որ եթէ փաշան որևէ փորձ անելու լինի ձեր դէմ, ես կը միջամտեմ, բայց դուք գոնչ մի ընծայ պարտաւոր էք ուղարկել նրա համար, եթէ ոչ, անհնար կը լինի արգելել նրան ձեզ նեղացնելու:

— Աչքիս վրայ, գլխիս վրայ, ասաց հայրս, ես մի լաւ գամփա ունիմ, որի նմանը չկայ ամբողջ Թիւրքիստանում: Նա մի կենդանի է, որ Շահի հայրն էլ երազում չէ տեսնել: Ես մտածում եմ նրան ընծայել փաշային: լաւ չի լինի:

— Մէկ բանի համար շատ լաւ կը լինի, պատասխանեց միրախոռը. բայց այդ բաւական չէ: Մտածեցէք, տեսէք ի՞նչ լաւ հետևանք կ'ունենայ ձեզ համար փաշայի սիրտը ձեր կողմից՝ հաճոյացնելը, և մի յարմար բան տուէք:

— Մի բան հէնց նոր անցաւ մտքիցս, ասաց հայրս: Ես մի ապջիկ ունեմ որ լուսնեակի պէս գեղեցիկ է, և բաւական էլ չաղլիկ է: Թէպէտ եղիդիներն անօրէններ են համարւում ձեզ մօտ, այնուամենայնիւ դուցէ փաշան ցանկութիւն ունենայ

տէր դառնալու մի գեղեցկուհու, որի նմանը Մոհամէդի դրախ-
տում էլ չի ճարուի.

Աֆէրի՛մ, աֆէրի՛մ, գոչեց միրախոռը. այդ շատ իսե-
լօք բան էք մտածել: Ես այդ բանը կ'առաջարկեմ փաշային
և կասկած չունեմ որ նա ուրախութեամբ կ'ընդունի: Այն, նա
կ'ընդունի և դուք յանձին ձեր աղջկայ կ'ունենանք մի հզօր
միջնորդ որ կարող կը լինի ամուր պահել ձեր և փաշայի բա-
րեկամութեան կապերը:

«Ա՞խ, հվ է կարող երեակայել թէ ես ինչ դարձայ, երբ
լսեցի այս խօսքերը: Ես մտածեցի լալ, ողբալ իմ վիճակը,
քայց մի ըոպէից յես ուրիշ կերպ մտածեցի: Բայց ի՞նչ է
մինելու ինձ, չէ՞ որ ես շուտով մի փաշայի կին կը դառնամ, չէ՞
որ ես փառաւոր զգեստներ կ'ունենամ, չէ՞ որ ես պատգարա-
կով կը շրջեմ, օ, ա՛յն ժամանակ նախանձելի կը լինի իմ վի-
ճակը: Մեր լեռնաբնակ աղջիկներն ինչպէս կը նախանձեն ինձ:

«Միրախոռը և իր մարդիկը վերցնելով հօրս տուած գամ-
փըռը՝ հեռացան: Հայրս անշափ ուրախացաւ որ կարողացաւ
այդպէս թեթև պայմաններով ազատուել այդ անկոչ հիւրերից:
Նա իսկոյն մարդ ուղարկեց իր որդու մօտ, որ մատակը վեր-
ցընէր գար: Յետոյ յայտնեց գիւղի ծերունիներին իր դը-
րութեան մասին: Նա հասկացրեց նրանց, որ եթէ իրանք շա-
ռունակեն մնալ փաշայի սահմաններում, փաշան այնքան նեղը
կը ձգէր իրանց որ բոլորն էլ մուրացկաններ կը դառնային:

—Դուք գիտէք, ասաց հայրս, որ մենք եզիդի ենք, և գի-
տէք նաև թէ մուսուլմաններն ինչքա՞ն են ատում մեզ: Փաշան
մինչև այսօր այնպէս է ցոյց տուել, որ իրը թէ մեծ բարեկամ
է ինձ հետ, որովհետև ես նրա համար կոիւներ եմ արել, կը-
ոիւների մէջ առիւծի քաջութիւն և ոյժ եմ ցոյց տուել, նրա
թշնամիների արիւնն եմ խմել. սակայն նրա փողասիրութիւնն
այնքան շատ է, որ հինչ բան չի կարող յագեցնել նրան: Ա-
հա, նա մի լաւ առիթ ունի կողոպտելու: մեզ, և մենք մեր
թուով չենք կարող գիմադրել նրան, թէպէտ՝ երդում եմ այն
զօրութեամբը, որին մենք բոլորս էլ յարգում ու պաշտում ենք,
որ եթէ մենք կանայք և զաւակներ չունենայինք, ես ինքս մե-
նակ՝ սուրը կողքիս, նիզակը ձեռքս և մատակիս վրայ նստած՝
կարող եմ ջարդել նրա ամբողջ վախկոտ զօրքը: Սակայն ես
առաջարկում եմ որ աելի խոհեմութիւն կը լինի մեր կողմից՝
առանց ժամանակ կորցնելու թողնել հեռանալ այս տաճկա-
կան սահմանից և գաղթել Պարսկաստան:

—Օղնա աղա, ասաց հօրս հօրեղբայրը, գու իմ եղբօր
մրդին ես, իմ զաւակն ես: Դու մեր ցեղի գլուխն ես, մեր պա-

հապանն ու պաշտպանն ես: Եթէ ես քեզ խորհուրդ տամ որ մատակը ետ տաս, դու պիտի կարծես, որ ես արժանի չեմ քիւրդ կոչուելու, եզիդի համարուելու. սակայն ես ասում եմ, որ մինչև անգամ մատակն էլ որ ետ տաս, դարձեալ փաշան ձեռք չէ քաշելու մեզանից: Փորձերը ցոյց են տուել, որ երբ տաճիկ փաշաներն առիթ են ունենում հարստահարելու մարդկանց, նրանք ամեն միջոց գործ են դնում կողոպտելու, քամելու նրանց: Ուստի ես էլ համակարծիք եմ քեզ, որ այլևս մենք չենք կարող մնալ այստեղ: Ես իմ կողմից պատրաստ եմ անմիջապէս հեռանալ այստեղից, որովհետև ուշանալը վտանգաւոր է: Այս գնանք այստեղից, իսկոյն հեռանանք, զաւակներս, Ալլահն մեծ է, ողորմած է:

«Եթոյ մի ծեր հովիւ որ լաւ ծանօթ էր տարուայ եղանակների և Պարսկաստանի ու մեր լեռների միջև ընկած երկը աշխարհագրական դիրքի հետ, խօսեց այսպէս.

— Եթէ մենք պիտի գնանք, լաւ է որ անմիջապէս գնանք, որովհետև մէկ օր ուշանալը կարող է վատ հետևանքներ ունենալ մեզ համար: Սարերի ձիւներն արդէն սկսել են հալուել և մէկ շաբթից յետոյ այնքան ջրեր կը լինեն մեր ճանապարհի վրայ, որ մենք չենք կարող մեր կենդանիներին անցկացնել նրանց միշով: Բացի դրանից, երեք շաբթից յետոյ արեգակը կը մտնէ Խոյի մէջ և այն ժամանակ, ինշալլահ, մեր մաքիները կը ծնեն: Ուրեմն առաջ քան այդ ժամանակը մեր ոչխարները պիտի կատարած լինեն իրանց ճանապարհորդութիւնը և հանգստացած լինեն:

— Նա ճշմարիտ է ասում, ասաց հայրս: Շատ լաւ ասացիր, ասաց նա հովուին, դու մի բարի ծառայ ես: Բայց մէկ բան կայ: Մեր Պարսկաստան մտնելուց առաջ մեղանից մէկը պիտի առաջապյն գնայ Քիրմանշահ և այնտեղի շահզադէից խնդրէ, որ մի լաւ կտոր երկիր յատկացնէ մեզ Այդ պարտքը ևս յանձն կ'առնեն կատարել:

«Երբ բոլորն էլ համաձայնութեան եկան, հայրս հրաման տուեց որ բոլոր քիւրդերը մինչև կէս գիշեր պատրաստուեն: Ճանապարհ ընկնելու: Երբ որ կանայք լսեցին այս հրամանը, բոլորն էլ սկսեցին լալ ու ողբալ, սակայն ես, Զինաբս, ուրիշ մտածմունքներով էի զբաղւում: Ես ամբողջ ժամանակը մտածում էի թէ Երբ փաշայի կինը կը դառնամ. բայց այդ ցանկութիւնը չկատարուեց, այդ երազը մնաց երա՞զ:

«Մեր ամբողջ բանակը այժմ շարժման մէջ էր. ոմանք ժողովում էին իրանց հօտերը, ոմանք վերցնում էին իրանց

Վրանները, ոմանք բեռներ էին կապում, վերջապէս ամեն մէկը մի բանով զբաղուած էր:

«Ճիշտ կէս գիշերին մենք ճանապարհ ընկանք և մի քանի օրից յետոյ հասանք պարսից սահմանագլուխը: Բախտը մեզ հետ էր, մեր ճանապարհորդութեան ժամանակ ոչ մի վտանգ չպատահեց մեզ: Հայրս թողնելով մեզ սահմանագլխի վրայ, ինքը շտապեց դէպի Քիրմանշահ խնդրելու այնտեղի քաղաքապետից, որ Շահի որդիների մէկն էր, պաշտպանելու և իրաւունք շնորհելու մեզ բնակուելու սահմանագլխի մօտ ընկած ընդարձակ դաշտի վրայ:

«Հայրս շուտով վերադարձաւ: Նրա հետ եկաւ մի պաշտօնեայ պարսից կառավարութեան կողմից, որ արտօնութիւն տուեց մեզ սեփականելու մի կտոր երկիր սահմանագլխից տասը Փարսաղ դէնը: Քիրմանշահի շահզադէն ուրախութեամբ կատարել էր հօրս խնդիրքը, տուել էր նրան մի ձեռք պատուոյ զգեստ և ասել էր նրան.

— Եթէ Բաղդատի փաշան պահանջէ որ դուք վերադառնաք իր սահմանը, ես կ'այրեմ նրա հօրը: Մարդս ազատ է. եթէ մէկը չէ ցանկանում մնալ այս ինչ տեղում, նա ազատ է հեռանալ այդտեղից և ապրել մի այլ տեղում:

«Եկերջապէս մենք հաստատուեցինք մեր նոր բնակավայրում և վերսկսեցինք մեր գործերը, սակայն թիւ ժամանակից յետոյ փաշայի կողմից Քիրմանշահ եկաւ մի պաշտօնեայ, որը յանձնեց շահզադէին մի նամակ, որով փաշան պահանջում էր որ մենք վերադառնայինք իր սահմանը: Այդ նամակով փաշան հօրս աւագակ է անուանում և պահանջում է որ հայրս իսկոյն ետ ուղարկէր մատակը: Նա աւելացրել էր նամակում, որ եթէ այդ մատակը իսկոյն չուղարկուէր իր համար, նա կը ստիպուէր գոխարինութիւն առնել պարսից ստացուածքից: Երբ այս լուրը տարածուեց մեր մէջ, բոլորս էլ ահ ու դողի մէջ ընկանք: Պարզ էր որ փաշան վճռել էր մատակը սեփականել և հօրս սպանել:

«Շահզադէն իր մօտ կանչեց հօրս և ասաց.

— Օղնւս աղա, մի վախենալ, բոլորովին հանգիստ կաց. Իմացիր որ քանի դու իմ ստուերի տակ ապրում ես, գլուխագաղուվ է: Իմ հօր պալատի դռները բաց են ամեն մարդի համար. բաւական է որ մի օտարական նրա զգեստին դիպչի, նա արդէն ապահով է: Դու մեղանից պաշտպանութիւն ես խնդրում, մենք մուսուլման չենք լինի, եթէ որ մերժենք քեզ: Ես խոստանում եմ որ հչ մի պայմանով չեմ զիջանիլ փաշայի պահանջին:

«Շահզադէի խօսքերի վրայ մենք բոլորս էլ շատ ուրախացանք ու միամտուեցինք. բայց մեր մէջ մէկ մարդ կար, որ մասնակից չեղաւ մեր ուրախութեանը, Դա հօրս հօրեղբայրն էր, Նա այնքան լաւ ճանաչում էր պարսիկներին, որ միշտ ասում էր. «Պարսիկներին չի կարելի հաւատալ»:

—Դուք դեռ չէք ճանաչում պարսիկներին, ասաց նա: Դուք խարում էք նրանց շղոքորթական խօսքերից և ձեզ ապահովուած էք կարծուած, բայց որովհետև ես երկար տարիներ ծառայել եմ նադր Շահին, լաւ գիտեմ թէ պարսիկներն ինչ պիսի մարդիկ են: Նրանց զէնքերն այն տեսակներից չեն որ գործ են ածուում բացարձակ դիմադրութեան և կռուի մէջ: Սրի ու նիզակի փոխարէն նրանք գործ են ածում դաւաճանուութիւնը, խաբէութիւնը և ստութիւնը, որպէս ամենալաւ զէնքեր: Նրանք շատ վարպետութեամբ մարդկանց քնացնում են և հէնց քնած տեղը նրանց որոգայթի մէջ են ձգում: Ստախօսութիւնը պարսիկների մեծ մոլութիւնն է: Միթէ դուք չէք նկատել, որ խօսելիս նրանք միշտ աշխատում են հաստատել կամ հաւատացնել իրանց ասածները մի քանի երդումներով: Եթէ մարդիկ ճշմարիտն են խօսում, ինչ կարիք կայ երդուելու: Մէկն երդում է քո հոգւով, քո զիսով, քո երեխայով: Մոհամէդով, իր ազգականներով և պապերով: Մի ուրիշը երդուում է «Ղէրլէով» (աղօթարան), իր թագաւորով, իր մօրուքով: Մի երրորդը՝ թահով, իր կերած աղ ու հացով, իսմամ Հուչյնի մահով. բայց արդեօք նրանք երբէք փոյթ ունին այդ բոլորի համար, որոնցով նրանք երդուում են, կամ արդեօք նրանց երդումը անկեղծ է: Ո՞չ, նրանք միշտ սուստ են խօսում, և երդումը նրանց լեզուի ծայրին միշտ պատրաստ է: Վերջապէս, հէնց այժմ, մեր զէպքում, դուք ինչ էք կարծուած. կարծիւմ էք որ մենք հանգիստ կ'ապրենք այստեղ. կարծում էք որ մատակը մեզ մօտ կը մնամ, չեն տամիլ: Ես ձեզ ասում եմ, որ պարսիկները տաճիկներից աւելի շատ սէր ունեն ծիերի վրայ, և մի լաւ արար ծի նրանց աշջում աւելի մեծ գին ունի, քան ադամանդներ ու յակինթներ: Եթէ Շահը լսէ որ մեզ մօտ այսպէս մատակ կայ, նա իսկոյն մարդ կ'ուղարկէ տանելու նրան: Եւ ինչ ենք կարող անել. կարմղ ենք կուտել ամբողջ աշխարհի դէմ: Ո՞չ, բարեկամներ. դուք ինչ ուզում էք կարծեցէք, բայց ես համոզուած եմ որ մեր դրութիւնը շատ անորոշ է, շատ կասկածելի է: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս որ ամենակին չհաւատաք պարսիկներին, չվստահէք նրանց:

«Երբունի մարդի խօսքերը ճշմարիտ էին. նրա գուշակու-

թիւնը կատարուեց. և ահա պատմեմ թէ ինչը պատճառ դարձած ինձ այստեղ ընկնելուն:

«Մի առաւօտ, արշալոյսից մէկ ժամ առաջ, մեր շներն սկսեցին անսովոր աղմուկներ հանել: Նրանք շատ կատաղած հաշում էին և այս ու այն կողմերը վազվզում: Սկզբում մենք ուշադրութիւն չդարձրինք՝ կարծելով թէ գայլեր են եկել, և շները չէին թոյլ տալիս նրանց մօտենալ մեր վրաններին, բայց յետոյ հայրս ու իր որդին վերցնելով իրանց հրացանները՝ դուրս գնացին տեսնելու թէ ինչ է պատահել: Հազիւ թէ քսան քայլ հեռացել էին մեր վրաններից, երբ նրանք տեսան մի ձիատր, յետոյ մի երկրորդը և քիչ յետոյ շատ ուրիշներ: Հայրս աեսաւ որ մեր վրանները լըջապատուած էին թշնամիներով. նա իսկոյն ի զէն գոչեց մեր տղամարդկանց: Բայց ձիաւորները ժամանակ չտուին, նրանք յարձակուեցին նրա վրայ և աշխատեցին կենդանի բռնել նրան: Հայրս քաջութեամբ կոուեց. մէկին վիրաւորեց և միւսին սպանեց իր հրացանով: Հրացանի ձայնը նշանաբան եղաւ թշնամիների համար ընդհանուր յարձակում գործելու: Նրանք թափուեցին մեզ վրայ: Նրանց նըպատակն էր ձեռք բերել մատակը, և այդ պատճառով նրանք թափուեցին կանանց վրանը և դուրս հանեցին նրան:

«Երբ արեւ ծագեց, մենք տեսանք որ մեր թշնամիները պարսիկներ էին, որոնք, ինչպէս շուտով յայտնուեց, ուղարկուել էին կառավարութեան կողմից: Հայրս սպանել էր մեզ վրայ յարձակուողների խմբապետին, այդ պատճառով նրանք իրաւունք համարեցին գերի տանելու մեզ: Երևակայիր մեր դրութիւնը, մենք ինչպէս թշուառացնք: Մեր աչքի առաջ էլ ինչ ասես որ չարին հօրս. մեր ունեցած-չունեցածը կողով-տեցին և ես»...

Զինաբը հէնց ուզում էր պատմել ինձ թէ ինքն ինչպէս ընկաւ Միրզա Ահմաղի ձեռքը, երբ յանկարծ տան դուռը զարկուեց: Երկուսս էլ ցնցուեցինք: Զինաբը խնդրեց ինձանից որ իսկոյն հեռանամ, և ինքը գնաց դուռը բանալու: Դուռը բացուեց, և հաքիմ բաշին ներս մտաւ: Նա շատ ուրախացաւ որ Զինաբը մենակ էր տնումը: Նա սկսեց այնպէս փաղաքշական ձերով խօսել նրա հետ, որ ինձ պարզ կերպով յայտնուեց թէ նա ինչքա՞ն էր սիրում նրան: Կտուրից ես լաւ դիտում էի երկուակին էլ: Նա մտաւ իր կոոջ սենեակը, որտեղ տեսնելով մեր ճաշի մնացորդը հարցուեփորձ էր անում Զինաբին, երբ յանկարծ ներս մտաւ խանումը իր աղաթինների հետ միասին: Նա այնպէս անակնկալ վրայ հասաւ որ նախ քան հաքիմ բաշու և Զինաբի միմիանցից բաժանուելը արդէն նրանց մօտ կանգնած էր:

— ԱԷլամ՝ ալէքոմ, ասաց նա արհամարհական տոնով: Ես ձեր խոնարհ ծառան եմ, յոյս ունիմ որ ձեր գերազանցութիւնների առողջութիւնը լաւ է: Յոյս ունիմ նաև, որ դուք շատ երջանիկ և ուրախ ժամանակ էք անցկացրել միմիանց հետ. միայն ցաւում եմ որ ես շատ շուտ վրայ հասայ:

Յետոյ նրա արինը զարկեց երեսին, և թողնելով իր հեգնական խօսքերը՝ սաստիկ զայրացաւ և յարձակուելով երկու տարաբախտ յանցաւորների վրայ՝ քրքրեց նրանց իր ատամներով և եղունգներով:

— Փահ, փահ, դուք ճաշել էլ էք, այն էլ իմ սենեակում: Մաշալլահ, մաշալլահ. տեսէք ես ինչ տեղ եմ ընկել, որ իմ տան մէջ, իմ սենեակում, իմ գորգի վրայ, իմ բարձի վրայ իմ գերիները քէֆ են անում: Այս ինչ բան եմ տեսնում: լահ, Ալլահ էլ էլլահ, ես երկնքից ընկել եմ գետին:

Յետոյ դառնալով իր ամուսնուն ասաց.

— Ի՞նձ նայիր, Միրզա Ահմադ, և ասա երեսիս, արդեօք դու արժանի՞ ես մարդ կոչուելու: Դու որ հաքիմ ես, դու որ այս րոպէին Պարսկաստանում հաքիմ լողման ես համարում, դու, այս, դու, այդ քո կապկի կերպարանքով, այծի մօրուքով, ուղարի քամակով, չես ամաչում որ նոր սիրահարութիւն ես անում: Ը՞հ, հողեմ գլուխդ, թքեմ երեսիդ: ապա ես ինչ եմ, որ գու սիրում ես այդպիսի մի պիղծ գերուհու: Այդպէս շուտիվ մոռացար, որ երբ գու մի սոսկ, մի հասարակ հաքիմ էիր, ես էի որ քեզ մարդ դարձրի: Եթէ դու այսօր մարդ ես համարում, դու համար դու պարտաւոր ես շնորհակալ լինել ինձանից: Այժմ դու կանգնում ես շահի առջև, սարդիկ գլուխ են խոնարհեցնում քեզ, քաշմիրի շալից շորեր ես հագնում, և մի խօսքով մեծ մարդ ես համարում: Ասա ինձ, տմարդի, ինչ է նշանակում այդ քո վարքը. չես ամաշում:

Հաքիմ բաշին հազար ու մէկ երդումներով աշխատեց հաւամոզել իր կնոջը որ ինքն անմեղ էր. սակայն կնոջ կատադութիւնը չիջաւ:

Իր ամուսնուն բաց թողնելով նա յարձակուեց Զինարի վրայ, յետոյ կրկին իր ամուսնու վրայ, և այնքան սաստկացաւ նրա կատաղութիւնը, որ բերանը լցուեց փրփուրով: Բաները չէին կարողանում բաւարարացնել նրան. ուստի բռնելով Զինարի երկար ծամերից՝ նա քարշ տուեց նրան և իր աղախինների օգնութեամբ նրան ձգեց աւազանի մէջ: Խեղճ Զինար, ինչպէս էր չարչարում, ինչպէս էր մաքառում: Ա՛խ, այդ տեսարանն ինչպէս էր բորբոքում սիրոս: Ամբողջ մարմինս կրակ էր կտրել. մտածում էի կտրից ցած թռչել և ոտիս

տակ ջախջախել այդ հրէշներին, որ այդպէս անիրաւաբար տանջում էին նրան. բայց ինչպէս անէի,

Երբ փոթորիկը դադարեց, ես կամաց ցած իջայ կըտ-
րից և գուրս գնալով տնից՝ քայլեցի դէպի դաշտերը՝ առանձ-
նութեան մէջ խորհելու իմ բռնելիք ընթացքի վրայ:

Մնալ հաքիմ բաշու ծառայութեան մէջ՝ այլնս անհնար
էր ինձ համար. իսկ յոյս գնել Զինարի ընկերակցութեան վը-
րայ՝ այդ էլ յիմարութիւն կը լինէր:

Մրտիցս արին էր գնում, երբ ես մտածում էի այդ
խեղճ, այդ տարաբա՛խս աղջկայ վրայ, ես արդէն գիտէի թէ
ինչ ոճագործութիւններ են լինում հարեմներում: ես գիտէի
որ Միրզա Ահմադի կնոջ պէս մի դկ ոչ մի միջոց չէր ինսա-
յիլ վերջ տալու թշուառացած աղջկայ կեանքին:

ԳԼ. իէ.

Հաքիմ բաշին պատրաստութիւններ է տեսնում շահին հիւրասիրելու իր
տնում:—Ի՞նչ ծախքեր է անում նա:

Ես վճռեցի հրաժարուել Միրզա Ահմադի տնից, բայց
Զինարի սէրը արգելք հանդիսացաւ: Ուստի մտածեցի, է, մի
կերպով քարշ տալ իմ գոյութիւնը հաքիմ բաշու տնում:

Չնայած որ նա՝ հաքիմ բաշին երբէք չէր կասկածում ինձ
վրայ, այնուամենայնիւ խիստ կարգադրութիւններ արեց իր
տան մէջ, այնպէս որ ինձ համար միանգամայն դժուարացաւ
միջոց գտնել Զինարին տեսնելու: Մի օր փողոցում հանդիպե-
լով նուրբ-է-Զէհանին՝ հարցրի նրանից.

—Ո՞րտեղ ես գնում այդպէս շտապ ու մենակ:

—Աղջ հաջի, ասաց նա, ես գնում եմ մեր քրդունու հա-
մար դեղ բերելու:

—Ի՞նչ, Զինարը հիւմնդ է. ինչ է պատահել նրան:

—Խեղճ աղջիկ, նա հիւմնդ է, իմստ տրտում է: Դուք
պարսիկներդ շատ չար մարդիկ էք: Մենք սևերս ձեզանից
երկպատիկ աւելի լաւ սիրտ ունինք: Դուք ասում էք, որ իբր
թէ դուք հիւրասէր էք և շատ բարի էք դէպի օտարականնե-
րը. բայց աշխարհում մի անսասունը—թողնենք «մարդկային
արարած» բառերը—այնքան տանջանք կրեց՝ ինչքան խեղճ
Զինարը: Օ՛, դուք պարսիկներդ այդքան անիրաւ էք:

—Բայց ի՞նչ են արել նրան, ասա ինձ, հոգիդ սիրես,
ասամ:

— էլ ի՞նչ ասեմ: Խանումը նախանձից դրդուած՝ նրան մի սենեակի մէջ՝ բանտարկեց: Խեղճ աղջիկը սաստիկ տենդով բռնուեց և գերեզմանի գուռը հասաւ Եթէ նա ջահիլ և առոյգ չինէր, ծ, նա արդէն մեռած կը լինէր. բայց հիմայ խանումը փոշմանել է իր արածի վրայ, և թոյլ է տուել նրան ազատ ման գալ տան մէջ: Սակայն գիտես թէ խանումն ինչու ազատութիւն տուեց նրան: Շահը այս օրերս պիտի այցելէ Միրզա Ահմաղին, և որովհետև նա, իրք թագաւոր, իրաւունք ունի մեր հարեմն էլ մտնելու և մեզ ըոլորիս էլ երես-բաց տեսնելու, ուստի խանումը ազատ թողեց Զինարին որպէսզի նա առղջանայ, և ինքը Շահի մօտ շրջապատուած լինի շատ աղախիներով:

Նուր-է-Զէհանի այս վերջին խօսքերը բաւական մխիթարեցին սիրտս, և ես մտածեցի հանգիստ ու անվրդով մնալ, մինչև տեսնէի Ալլահն ի՞նչ էր տնօրինելու ինձ համար:

Բաւական ժամանակ էր որ Միրզա Ահմաղը ինձ հետ չէր խորհրդակցել իր գործերի վերարերմանը. սակայն Շահի այցելութեան առթիւ նա դարձեալ իմ օգնութեանն ու խորհրդակցութեանը կարիքն զգաց, և մի օր իր մօտ կանչելով ինձ՝ սսաց.

— Հաջի, ինձ ասում են որ Շահի համար ես մի լաւ «փաէնդազ» *) պիտի պատրաստեմ: Արքունի գանձապետն առաջարկում է ինձ, ոսկեթել բանուածքով կտորներ, բաշմիրիշ շալեր և որչափ կարելի է թանկագին կտորներ փոել նրա ճանապարհի վրայ: Նա առաջարկում է նաև փոել մի փառաւոր մասնաղ**): Դու գիտես, հաջի, որ իմ նիւթական կարողութիւնից վեր է ալդ բոլորն անել: Մնացել եմ շուարած, չգիտեմ ի՞նչ անել Դու ի՞նչ խորհուրդ կը տաս ինձ:

— Ճիշտ է որ դուք հաքիմ էք, պատասխանեցի ես. բայց չմոռանանք որ Շահի հաքիմ բաշի էք: Բացի դրանից, խանունի խաթրու դուք ստիպուած էք շատ մեծ, շատ շքեղ ընդունելութիւն ցոյց տալ նրան:

— Ուղիղ ես խօսում, հաջի, բայց ինձ մրտեղից են այդքան թանգագին շալեր, գորգեր և այլն:

— Ես այդ չգիտեմ: Ապա ի՞նչ էք ուզում փոել նրա ոտների տակ. ջալմբ, սպեղանու կտմւ:

*) Նըր Շահը այցելում է որևէ մի պետական կամ ազգեցիկ մարդու, նըրան ընդունելու համար, տանաէրը պարտաւոր է իր տան դանից մինչև ընդունարանը գետինը ծածկել թանկագին կտորներով, որպէսզի Շահը նրանց վրայով քայլէ: Այս կտորները կոշտում են «փաէնդազ»:

**) Երկուտակ ծալուած մի գորգ, որի վրայ Շահը նստում է իրք գահի վրայ:

— Ո՞չ. բայց մենք կարող ենք գետինը ծածկել ծաղիկներով, որովհետև դու գիտես թէ ծաղիկներն ի՞նչքան արժան են: Գուցէ կարող կը լինենք մէկ եղ էլ մորթել և մի քիչ էլ քաղցըրաւենիք գնել. սրանք բաւական չեն:

— Ո՞չ, ոչ, ասացի ես, ի՞նչպէս կարելի է: Եթէ գուք այդպէս վարուելու լինիք, Շահը և ձեր թշնամիները լաւ առիթ կը գտնեն ձեզ մերկացնելու: Եթէ արքունի գանձապետի ասած քաշմիրի շալերն ևայլն չէք կարող պատրաստել, գոնէ այսպէս կարող էք անել. փողոցումը կտաւ փոքք, տան դրան մօտ թաւիշ, գաւթումը դիպակ և սենեակումը շալ: Դրանք հօայնքան թանգ չեն նստելու ձեզ վրայ:

— Այդ վաստ չես ասում, մենք արդէն բաւականաչափ չիթ ունենք որ ես գնել եմ մեր կանանց համար վարտիքներ կարելու: Անցեալ օրը մի հիւանդ ինձ տուեց մի կտոր Սպահանի թաւիշ, այդ էլ պէտք կը գայ: Վերջին անգամ Շահից ստացած պատույ զգեստս էլ կը ծախեմ դիպակ գնելու համար: Կնոջս շալերից մի-երկուան էլ սենեակում կը փոենք: Օ՛, Ալիի օրհնութեամբն ամեն բան կարգադրուեց:

— Բայց հարեմի մասին բան չմտածեցինք, ասացի ես. չէ որ Շահն այնտեղ էլ պիտի մտնի: Դուք զիտէք որ մեծ բարերախտութիւն է որ Շահը այցելէ ձեր հարեմը, և ձեր կանայքը շատ ճոխ կերպով պիտի հագնուեն այդպիսի ժամանակում:

— Օ՛, նրանց համար ես ամենեկին չեմ հոգում. Նրանք կարող են ուրիշներից փոխ առնել ինչ որ իրանց պէտք է:

Խանումը լսելով որ հաքիմ բաշին ոչ մի պատրաստութիւն չէ տեսնելու հարեմի համար, սաստիկ բարկացաւ և էլ վաստ անուն չմնաց որ չտուեց իր ամուսնուն: Նա ստիպեց նըրան այնպիսի կարգադրութիւններ անել հարեմի համար, ինչպէս որ պարտ ու պատշաճ էր:

ՔԼ. իը.

Թէ Միրզա Ահմադը ինչպէս է ընդունում Շահին: — Նա ինչ է փէշքէշ անում նրան: — Ինչ խօսակցութիւն են ունենում միմիանց հետ:

Շահին ընդունելու օրը մեծ իրարանցում ընկնաւ հաքիմ բաշու տունը: Առաւատը շատ շուտով մի քանի ֆէրրաշներ եկան և սկսեցին գորգեր փոել դահլիճում և պատրաստել մասնադը: Յետոյ սկսեցին ամբողջ բակը ջուր շաղ տալ. աւազանները մաքրեցին և շատրուանները բացին:

Շահի պարտիզաններն էլ եկան և տան պատերը զարդարեցին ծաղիկներով: Նրանք նարինջներ շարեցին աւազանների շուրջը և վարդիր ցրեցին ջրի երեսին:

Յետոյ եկան խոհարանները: Նրանք այնքան ահագին կաթսաններ և ամաններ բերին իրանց հետ, որ հաքիմ բաշուսիրտն սկսեց դողալ: Եկան նաև մի խումբ շաքարագրուններ և տեղաւորուեցին մի առանձին սենեակում, որտեղ նրանք սկսեցին պատրաստել քաղցրաւենիք, շէրբէթ, պաղպաղակներ և այլն: Նրանք այնքան բաներ պահանջեցին հաքիմ բաշուց, որ նրա սիրտը քիչ էր մոռմ պատուէր:

Յետոյ եկալ Շահի երաժշտական խումբը: Մրանից յետոյ էլ եկալ լութի բաշին իր խմբով:

Վերջապէս երբ յայտարարուեց որ Շահը դուրս է եկել պալատից, Միրզա Ահմադը ընդառաջ գնաց նրան: Ամենից առաջ գալիս էին մուսհաթիկները, յետոյ մի խումբ ֆէրաշներ իրանց ճիպոտներով, յետոյ լաւ հագնուած պաշտօնեաններ, յետոյ մի խումբ ծառաններ՝ իրաքանչիրի ձեռքում մի ոսկեզրուս դայլան: Յետոյ Շահի կօշիկներ տանողը և մի խումբ ուրիշ ծառաններ:

Որովհետև Շահի այս այցելութիւնը բարեկամական էր և ոչ պաշտօնական, նա թոյլ չէր տուել որ մեծ թափօրով անցընէին փողոցներով: Նրա շքախմբի մէջ եղացներ չկային:

Յետոյ եկալ Շահը՝ նստած մի ընտիր նժոյգի վրայ որ շամ փառաւոր կերպով զարդարուած էր, թէև ինըը պարզ կերպով հագնուած: Յիսուն քայլ հեռու նրա ետևից գալիս էին նրա երեք որդիքը: Յետոյ արարողապետը, յետոյ արքունի բանաստեղծը և շատ ուրիշներ իրանց ծառաններով հանդերձ: Մի խօսքով Շահի շքախմումը բաղկացած էր 500 հոգուց:

Միրզա Ահմադի տան դուռը համնելով Շահը իջաւ ձիուց (որովհետև մուտքը նեղ էր ձիով անցնելու համար) և անցնելով գաւթի միջով՝ մտաւ դահլիճը: Բացի շահզադէներից՝ բոլորն էլ դուրսը մնացին: Հաքիմ բաշին ինքն էր սպասաւորում Շահին:

Երբ Շահը բազմեց մասնադի վրայ, հաքիմ բաշին, մի արծաթեայ մատուցարանի վրայ դրուած 100 ոսկի իր ձեռքով ներկայացրեց Շահին: Յետոյ արարողապետը բարձր ձայնով ասաց.

—Նորին վեհափառութեան՝ տիեզերքի կենարոնի, արքայից արքայի, Ալլահի ստուերի ամենանուաստ ծառայ Միրզա Ահմադ հաքիմ բաշին թոյլտութիւն է հայցում մօտենալ նո-

թիւն Մեծութեան ուսներին և պատկառանքով նուիրել 100 ոսկի, .
որպէս զոհ:

Շահը պատասխանեց.

—Դու բարի ես եկել Միրզա Ահմադ. դու լաւ ծառայ
ես, Շահը քո վրայ շնորհ ունի: Դու քո վարմունքով կարողա-
ցար երեսդ սպիտակացնել: Գնա, փառք տուր Ալլահին, որ
Շահը հաճել է քո տոմնը գալ և այժմ էլ ընդունում է քո
վէշքէշը:

Հաքիմ բաշին չոգելով Շահի առջև համբուրեց նրա
ձեռքը:

—Շահի գլուխն է վկայ, ասաց արքայից արքան իր աղ-
նուականներին, որ հաքիմ բաշին մի բարի մարդ: Է: Նա աւելի
իմաստուն է քան Լողմանը, աւելի գիտուն է քան Գալէնը:

—Բա՛լի, բա՛լի (այն, այն), պատասխանեց ազնուական-
ների ազնուականը, որ արարողապետն էր: Պօմ շունն էր Լող-
մանը կամ Գալէն: Նրանք Միրզա Ահմադի հետ համեմատած
ոշինչ էին: Պարսկաստանը դեռ այսպէս թագաւոր չէ ունեցել,
և հչ մի թագաւոր Միրզա Ահմադի պէս հաքիմ չէ ու-
նեցել: Մարդիկ գովում են Փուանգների և հնդուների հաքիմ-
ներին. բայց մի՛թէ մենք չգիտենք, որ գիտութիւնը Պարսկաս-
տանից է դուրս գնում:

—Այդ բոլորը շատ ճշմարիտ է, ասաց Շահը: Պարսկաս-
տանը մի երկիր է, որ աշխարհիս սկզբից մինչև այսօր նշա-
նաւոր է եղել իր հանճարեղ բնակիչներով և իմաստուն ինքը-
նականներով: Սկսած Կայուղը որ աշխարհիս առաջին թա-
գաւորն էր, մինչև ինձ՝ որ այժմեան Շահն եմ, Պարսկաստանը
ունեցել է ամենակատարեալ և ամենահզօր թագաւորներ: Հընդ-
կաստանն ունեցել է իր իշխանները, Արարատանը՝ իր խալիֆ-
ները, Տաճկաստանը՝ իր խունխունները (արիւն խմողներ), Թա-
թարստանը՝ իր խանները և Զինաստանը՝ իր կայսրները: Բայց
Փուանգները, որ միայն Ալլահն է լաւ իմանում թէ որտեղից են
գալիս իմ երկիրը առևտուր անելու և ինձ համար ընծաներ
ըերելու, այն, այդ ողորմելի անհաւատները, անօրէնները, մի
խումբ թագաւորներ ունեն, որոնց երկիրների անուններն ան-
դամ մենք չենք լսած:

—Բա՛լի, բա՛լի, շատ ճշմարիտ է, ասաց ազնուականնե-
րի ազնուականը: Արքայից արքան հրեշտակի պէս է խօսում:
Ֆուանգների որ թագաւորն է կարող նրա պէս խօսել:

—Բալի՛, բալի՛, ասացին բոլորը միաբերան:

—Շահը հազա՞ր տարիներ ապրի, ասաց մէկը:

—Նրա ստուերը միշտ մեր գլխին լինի, ասաց մի ուրիշը:

— Բայց մէկ բան որ ամենից շատ զարմացնում է ինձ,
շպրունակեց Շահը, այդ Փոանգների կանանց վերաբերու-
թեամբ է: Նրանք անդէրուն (կանանց բաժին) չունին իրանց
տներում: Մարդիկ և կանայք միասին են ապրում: Նրանց կա-
նայքը մեր թափառական ցեղերի պէս երբէք չեն ծածկում ի-
րանց երեսները: Նրանք փոյթ չունին եթէ օտարականները
կը տեսնեն իրանց երեսները: Ասա ինձ, Միրզա Ահմադ, դու որ
հաքիմ ու փիլիսոփա ես, նախախնամութեան ի՞նչ արտաքոյ
կարգի տնօրինութեամբն է, որ աշխարհում միմիայն մուսուլ-
մաններն են որ կարող են հաւատ ընծայել իրանց կանանց:
Օ՛, մեր կանայքը որքա՞ն հաւատարիմ են, հեզ և խոնարհ են:
Լսում եմ, հաքիմ բաշի, որ դու մի շատ հնագանդ, հեզաբարոյ
և պարտաճանաչ կին ունես:

— Արքայից արքայի գթութեան ու հովանաւորութեան
շնորհիւ, պատասխանեց հաքիմ բաշին, ես վայելում եմ այն
բոլոր բանները, որոնք երջանկացնում են մարդուս կեանքը:
Նուաստո, կինս և ընտանիքս վեհափառութեանդ ստրուկներն
ենք, և ինչ որ մենք ունենք՝ ձերն է: Երջանկարար կը լինի այն
ժամը, երբ թագաւորաց թագաւորը կը մտնի իմ անդէրունը. օ,
այն ժամանակ Միրզա Ահմադի գլուխը աստղերին կը համանի:

— Լաւ, ասաց Շահը, դու այժմ գնա և յայտնէ հարեմիդ
որ Շահը կ'այցելէ նրանց: Յայտնիր կանանց բոլորին, որ եթէ
իրանց մէջ կայ մէկը որ հիւանդ է, կամ որևէ փափագ
ունի, կամ եթէ կայ մի աղջիկ որ հալւում ու մաշւում է
իր սիրականի կարօտով, կամ մի կին, որ ցանկանում է ա-
զատուել իր ամուսնուց, թող այդպիսիները մօտենան ինձ,
նայեն երեսիս, և նրանց ցանկութիւնը կը կատարուի:

Շահը յետոյ արձակեց ազնուականներին և պատրաստուեց
ընթրելու:

—
Գլ. իթ.

Շահը ընթրում է: — Հաշի-Բարայի յոյսերն ի դերեւ են ելնում:

Դահլճում մնացին միայն Շահի երեք որդիքը և մի քա-
նի սպասաւորներ: Միրզա Ահմադը դուրսը մնաց: Արծաթաթել
ծովերով եղերուած մի շատ գեղեցիկ քաշմիրի շալ փոռւց
Շահի առջև, և մի ոսկէ կոնք և սափոր մատուցուեց նրան
ձեռքերը լուանալու համար:

Յետոյ ծառաները ներս բերին մեծ-մեծ մաշմահիների

մէջ դրուած կնքուած կերակուրներ և դրին Շահի առջև: Աւագ տնտեսը մօտեցաւ և քակեց կնիքները: Կերակուրները բաղկացած էին հետևեալներից: Զարազան ձեերով ու գոյներով պատրաստուած փլաւ, տապակած հաւ, գառ, ձուկ, կաքաւ, սիրամարգ, ձուածեղ, խաշած միս, խաշած ձուեր, կարմրացրած բաղմջան, խորոված և շատ ուրիշ բաներ: Բացի սրանցից կարնակ մի քանի տեսակ մուրաբա, թթուեղէն, պանիր, կարագ և մի տասը տեսակ շերբէթ:

Շահը կռանալով իր ձեռները թաղեց փլաւի մէջ և կերաւ առանց մի բառ խօսելու: Ուտելու ժամանակ նա հաճեց մի աման փլաւ, որի մի մասը ինքը կերել էր, ուղարկել Միրզա Ահմաղի համար որ դրսում ծառայում էր: Դրանով Շահը մեծ պատիւ էր տալիս նրան, և նա պարտաւորուեց փողով ընծայ տալ տանողին: Մի ուրիշ կերակուր էլ նա ուղարկեց բանաստեղծի համար, նա էլ ստիպուեց տանողին մի ընծայ տալ: Մի երրորդ կերակուր էլ, որից նա բաւականաչափ կերել էր, ուղարկեց հաքիմ բաշու կնոջ համար, որը առատ վարձատրութիւն արաւ տանողին: Այս կերպով Շահը երկու հոգու միաժամանակ վարձատրում էր — մէկը ընծայ տանողին, միւսը ստացողին:

Երբ Շահը վերջացրեց ճաշը, դահլճից անցաւ միւս սենեակը, որտեղ նա լուաց իր ձեռները, խմեց սուրճ և ծխեց դայլան: Յետոյ նրա երեք որդիքը նստեցին կերակրուելու և երր նրանք էլ կշտացան, կերակուրները գուրս տարուեցին մի ուրիշ սենեակ, որտեղ Շահի արարողապետը, բանաստեղծը, միրախոռը և միւս ազնուականները նստեցին ուտելու: Սրանք էլ երբ կշտացան, մնացած կերակուրները յաջորդաբար տարուեցին ծառաների մօտ, մինչև որ ամենից վերջը հասաւ խոհարաբի աշակերտներին:

Ղայլանը ծխելուց յետոյ Շահը այցելեց հարեմը հաքիմ բաշու առաջնորդութեամբ: Ես անհամբեր էի լսելու, թէ նրա այցելութիւնը ինչ բարի հետևանք կ'ունենար իմ Զինարի համար, և երևակայեցէք իմ զայրոյթը, երբ լսեցի, որ հաքիմ բաշին իր քրդուհուն փէջքէլ է արել Շահին:

«Ես կ'աշխատեմ տեսնել իմ Զինարին», մտածեցի ես: Շուտ գնացի կտուրը, որտեղից նայեցի կանանցի մէջ, Արդէն զիշեր էր, և թէպէտ ես ոչ մի նշանով չէի կարողանում հասկացնել Զինարին որ ես իրան սպասում էի կտրին, սակայն մեծ յոյս ունէի որ սիրոյ ազդմամբ կամ թելաղրութեամբ՝ նա կը հասկանար որ ես այնտեղ էի, և կը գար:

Շահը հետացել էր Միրզա Ահմաղի տնից, և իրարանցումը

դադարել, ես անհամբեր սպասում է Զինաբին, Յանկարծ նա
կանգնեց մօտս:

ՔՂ. Հ.

Հաջի Բաբայի հակառակորդը յանձին Շահի.—Նա զրկում է իր սիրոյ
առարկայից:

Զինաբը իսկոյն հասկացրեց ինձ որ նա այլևս չէր կարող
տեսնուել ինձ հետ, որովհետև այդ բովէից ինքն արքունի հարե-
մին էր պատկանում, և եթէ մէկը մեզ միմեանց հետ տեսնէր,
մենք երկուսով մահուան պատիժ կը կրէինք: Կարծես թէ նա
այնքան էլ փոյթ չունէր մեր՝ միմիանցից բաժանուելու հա-
մար:

—Ի՞նչպէս եղաւ որ Շահը հաւանեց քեզ, հարցըի ես:

—Երբ նա ներս մտաւ մեր անդերունը, պատասխանեց
նա, մի խումբ երգչուհիներ սկսեցին իրանց թմրուկներին խը-
փել և գովասանական երգ երգելով մօտենալ նրան: Շահը
նստեց մեր դահլիճում, և մեր խանումը մօտենալով նրան՝
համբուրեց նրա ծունկը: Յետոյ նա ընծայեց նրան վեց հատ
արաղջին, երկու զոյգ քաշմիրի շալ վարտիք, երեք մետաքսէ
շապիկներ, երեք զոյգ գուլպայ և մի քանի ուրիշ բաներ:
Անդերունի բոլոր կանայքը երկու շարքի բաժանուեցին և
կանգնեցին Շահի աջ ու ձախ կողմում: Ինձ ամենից ցած
կանգնեցրին, մինչև անգամ նուր-է-Ֆէհանից էլ ցած: Մենք
ամենքս էլ աշխատում էինք Շահի աշքում գրաւիչ երևալ.
Նոյնիսկ պառաւ Լէյլան էլ աշխատում էր Շահի սիրուը գրաւել:
Մի քանի բովէ իր աշքերը ինձ վրայ յառելով Շահը ասաց
հաքիմ բաշուն.

—Դա ինչ տեսակ բան է. դա վատ բան չէ երևում: Մա-
շալլա՞ն, հաքիմ բաշի, գու լաւ ճաշակի տէր մարդ ես. դա
շատ սքանչելի անասուն է:

Հաքիմ բաշին գլուխ տալով ասաց.

—Դուքքան լինիմ ձեզ, ինչ որ ես ունիմ՝ ձերն է. բայց
թոյլ տուէք ինձ փէքքէշ անել ձեզ այդ գերուհուն:

—Շատ լաւ, ընդունում եմ, ասաց Շահը և անմիջապէս
կանչելով իր ներքինիներից մէկին, հրամայեց նրան, իմ ապա-
գայ գրութեանը յարմար մի ձեռք զգեստ պատրաստել տալ և
միենոյն ժամանակ ինձ լաւ վարժեցնել երգի և պարի մէջ, մին-
չև ինքը վերադառնար ամարանոցից: Օ՛, ես չեմ կարող մոռա-